Թահավիի Աքիդան (Իմամ Ատհավի հավատքի ուսման շարադրությունը)

[Հայերեն - Armenian – أرميني]

Իմամ Աբու Ջաֆառ-Թահավի

Թարգմանություն:

EUROPEAN ISLAMIC RESEARCHES CENTER (EIRC)


& Հմայակ Նալբանդյան (Hmayak Nalbandyan)

Ստուգում:

Ախմեդ Հայկական

2012 - 1433

IslamHouse.com



﴿ العقيدة الطحاوية ﴾

« باللغة الأرمينية »

أبو جعفر الطحاوي

ترجمة: المركز الأوروبي للدراسات الإسلامية

& إيماياك نالبانديان

مراجعة: أحمد الأرميني

2012 - 1433

IslamHouse.com

Ատ-Թահավիի կազմած (239-321 Հիջրից առաջ) աքիդան (հավատի, հավատքի ուսման խորհրդանիշ) խոսում է Ահլ աս-Սուննա վա-լէ-Ջամաաթի (Սուննայի և համաձայնության մարդիք) աշխատանքը: Դա իր ժամանակի ամենահեղինակավոր աշխատանքներից մեկն էր՝ իր ոլորտում:

Իմամ Աբու Ջաֆառ Ահմադ բին Մուհամեդ բին Սուլեիման բին Սալմա բին Աբդ-ալ-Մալիկ բին Սալմա բին Սուլեիման բին Ջավաբ ազդի՝ որը հայտնի է որպես իմամ Թահավի (ծնված Եգիպտոսում) և համարվում է Հադիսի և ֆիկհի կողմից իսլամական աշխարհի ամենալավ հեղինակություններից մեկը:Նա ապրել է այն ժամանակաշրջանում՝ երբ ջանք էին թափում Աբու Համոֆի, Մալիկի Շաֆիի ու Հանբալի անմիջական աշակերտները և այդ աշակերտների աշակերտները: Դա Հադիսի և Փիկհի բարգավաճման ջամանակաշրջանն էր:

Նա սկսեց որպես քեռու՝ իմամ Շահավիի առաջատար հետևորդ Իսլամ բին Յահա ալ-Մազանիի աշակերտ: Սակայն իմամ Թահավին հետաքրքրվում էր իմամ Աբու Հանիֆի բանաստեղծություններով: Եվ նա տեսնում էր իր հորեղբոր վերաբերմունքը Հանիֆյան դպրոցի գիտնականների աշխատանքներին, որպեսզի լուծի լուրջ խնդիրները՝ուսումնասիրելով Հանիֆյան ֆիկհերը որակավորած իմամ Մուհամեդ բին ալ-Հասան աշ-Շայբանի ու իմամ Աբու Յուսուֆի ստեղծագործությունները: Դա ստիպեց իմամ Թահավիին անդրադարձնել ամբողջ ուշադրությունը խանավիտյան գործերին, և նա ի վերջո անցավ խանավիտյան դպրոցին:

Իմամ Թահավին ոչ միայն Հանաֆյան հերևորդներից է, այլ նաև դպրոցի առաջատար գիտնականներից է հաշվի առնելով նրա իսկայական իրավասությունը և հրաշալի ընկալման ուժը: Նրա մոնումենտալ գիտական ստեղծագործությունները՝ ինչպիսիք են «Շարի մա անի ալ-Անսար» ու «Մաշկիլ ալ անսարը» համարվում են որպես հանրագիտական շրջաններում և երկար ժամանակ նայվում էին որպես անհրաժեշտ օրենսդրություն (ֆիկհի) ուսանողների համար: Ալ-Աքիդան ինչքան էլ որ քիչ է մուսուլմանի իմանալու համար, դա բոլոր ժամանակների ամենակարևոր տեքստն է՝ հավատալու և հոգով հասնելու համար:

Համակիցների, հետևորդների և բոլոր առաջատար հեղինակությունների՝ ինչպիսիք է իմամ Աբու Հանիֆը, իմամ Աբու Յուսուֆը, իմամ Մուհամեդը, իմամ Մալիկը, իմամ Շաֆիին և իմամ Ահմադ բին հանբալի միջև գոյություն ունի համաձայնություն գրքի մեջ թվարկված սկզբունքների մեջ: Հետևաբար այդ դրույթները՝ որոնք կիսում են Ահլ աս-Սուննա վա-լ-Ջամաատը ծագել են սուրբ ղուրանից և ապացուցված հադիսներին համաձայն՝ իսլամի անվիճելի սկզբնաղբյուրին:

Լինելով աքիդի տեքստ, այդ գործը հիմնականում ներառում է սուրբ ղուրանում և Սուննայում գրված փաստարկներ: Ինչպես նաև կան աղանդական հայեցողությունները հերքող փաստարկներ՝ որոնք նույնպես վերցված են սուրբ ղուրանից:

Ինչ վերաբերվում է գործի մեջ գրված աղանդներին, օգտակար կլինի ուսումնասիրել Թահավիի ժամանակաշրջանի իսլամի պատմությունը: Տեհստում ասվում է մուտազիլիտների, ջահմիտների, քադարիտների, ջաբիտների և այլ բանականությունից

դուրս հավատքների ու շիիտների տեսանկյունից շեղված հարիջիթների և կախարդների մասին՝ որոնք շեղվել են ճիշտ ճանապարհից: Կան ղուրանի (Հալիք-ալ-Ղուրան) ստեղծման մասին վեճերի պարզ հիշացումներ՝ Մուման և այլ աբբասիդական խալիֆների ժամանակաշրջանում:

Ատ-Թահավիի Աքիդան

Մեծ գիտնական Դովոդ Իսլամա Աբու Ջաֆառ ալ-Վարրուկ ատ-Թահավի ալ-Միսրին (Ալլահը ներողամիտ լինի նրա հանդեպ) ասաց. «Սա իրավագետների դպրոցի Աբու Հանիֆի ան-Նումանա իբն Սաբիտա ալ-Կուֆի, Աբու Յուսուֆա Յակուբա իբն Իբրահիմ ալ-Անսարի և Աբու Աբդուլլահ Մուհամեդ իբն ալ-Հասան աշ-Շայբանի (Ալլահը գոհ լինի նրանց բոլորից) իրավագետների սկզբունքներին և այն ամենին, որ նրանք հավատում էին կապված կրոնի հիմքերի և բոլոր աշխարհների աստծո հետ, հավատքի ուսման շարադրությունն է՝ գրված Ախլ-աս-Սուննա վա-լ-Ջամատիի կողմից»:

1. Ալլահի օգնությամբ հավատալով, որ Ալլահը մեկն է, առանց որևէ համակիցի, ասում ենք Ալլահի մեկը լինելու մասին:
2. Նրա պես ոչինչ գոյություն չունի:
3. Նրան գերազանցող ոչինչ չկա:
4. Նրանից բացի այլ աստվածություն չկա:
5. Նա ընդմիշտ է, առանց սկիզբ, վերջ, մահ, ընդհատում:
6. Նա երբեք չի մահանա և չի ընդհատի իր գոյությունը:

7. Առանց նրա ցանկության ոչինչ չի կատարվում:
8. Ոչ մի պատկերացում չի կարող հասնել նրան և ոչ մի հասկացություն չի հասնում նրան:
9. Նա տարբերվում է բոլոր ստեղծված էակներից:
10. Նա ողջ է և երբեք չի մահանում, նա միշտ գործողության մեջ է ու երբեք չի քնում:
11. Նա ստեղծում է առանց կարիք զգալու և սնունդ է տալիս իր ստեղծածին առանց որևէ ջանքի:
12. Նա մահացնում է առանց վախի և կյանքի է վերադարձնում (հարություն է տալիս) առանց ջանքի:
13. Նա դեռ ստեղծումից առաջ էլ միշտ գոյություն ուներ իր ատրիբուտներով (հատկություններով): Գոյությունների ստեղծումը նրան ոչինչ չավելացրեց նրա ատրիբուտներին: Եվ նա իր ատրիբուտներով կար ընդմիշտ և այդպես էլ մնում է ընդմիշտ:
14. Ասում են, որ նա արարիչն էր ոչ միայն արարելուց հետո, այլ նաև դրանից առաջ:
15. Նույնիսկ այն ժամանակ՝ երբ չկար ոչինչ՝ որի համար նա կարող էր լիներ աստված, նա միշտ աստված էր:
16. Այն բանի պես՝ որ նա «հարություն տվող» նրանց առաջին անգամ կյանք տալուց հետո արժանի է այդ անվանը մինչ նրանց սաղացնելը, այդպես էլ արժանի էր «արարիչ» անվանը մինչ նրանց կյանքի բերելը:

17. Քանի որ նա ամենազոր է (իր իշխանությունում անել ամեն ինչ), ինչ կախված է նրանից: Ամեն ինչ թեթև է նրա համար: Նա ոչինչի կարիք չունի: **«Նրա պես ոչինչ գոյություն չունի: Նա լսող և տեսնող է» (դուրան, 42:11):**
18. Նա արարել է արվածը իր իմացությամբ:
19. Նա է արարել (կանխորոշել) իր բոլոր էակների ճակատագրերը:
20. Նա է արարել նրանց համար կյանքի տևողությունները:
21. Մինչ նրանց արարելը նա գիտեր, թե ինչ են անելու և ոչինչ անհայտ չէր նրա համար:
22. Նա հրամայեց նրանց, որ հնազանդվեն ու լսեն իրեն:
23. Անեն ինչ կատարվում է նրա որոշմամբ (կանխորոշմամբ) ու կամքով, և նրա կամքը կատարվում է (ամբողջությամբ): Մարդիք ունեն միայն մի կամք՝ այն ինչ նա է ցանկանում (նրանց համար): Նրա ցանկությունները լինում են և ինչ չի ցանկանում, չի լինում:
24. Նա ուղիղ ճանապարհով տանում է՝ ում ցանկանում է: Եվ իր առատաձեռնությամբ պաշտպանում ու պահպանում է նրանց վնասից և հանում է (ճանապարհից) ում ցանկանում է և նսեմացնում է նրանց ու տանջում իր արդարությամբ:

25. Նրանք բոլորն էլ ենթարկվում են նրա կամքին՝ (գտնվելով) առատաձեռնության ու արդարության միջև:
26. Նա շատ ավելի բարձր է նրանից՝ որ ունենա հակադրություններ կամ իրեն հավասարներ:
27. Ոչինչ ի զորու չէ հանել իր վրայից նրա կանխորոշումը կամ ոտնահարել նրա հրամանը կամ էլ հաղթահարել նրա իշխանությունը:
28. Մենք հավատում ենք այդ ամենին՝ որ ամեն ինչ իրագործվում է նրա կողմից:
29. Մենք համոզված ենք, որ Մուհամմեդը (Ալլահը օրհնի և ողջունի նրան) նրա ընտրյալ ստրուկն է ու ընտրյալ լուսավորիչը, և նա ուղարկյալն է՝ ումից նա գոհ է:
30. Եվ որ նա լուսավորիչների (կնիքն) է, աստվածավախների իմամը, ամենավեհ ուղարկյալն ու աշխարհների աստծո սիրվածը:
31. Նրա լուսավորչության ամեն ընդդիմությունը սուտ և խաբեբայություն է:
32. Նա է ուղարկված բոլոր ջիներին, ամբողջ մարդկությանը՝ աստծո ղեկավարությամբ ու ճշմարտությամբ, լույսով և ոգեշնչմամբ:
33. Ղուրանը Ալլահի խոսքն է՝ որ եկել է, նրանից կոսքի պես և որի մասին չի կարելի ասել «ինչպես»: Նա գրել է դա իր ուղարկյալին (Ալլահը օրհնի և ողջունի նրան) որպես անկեղծություն (վախ): Հավատացյալները

ընդունում են դա որպես բացարձակ ճշմարտություն: Դա ստեղծված չէ որպես մարդկանց խոսք, և ամեն ոք՝ որ լսում է դա և արձանագրում է, թե դա մարդկային խոսք է, դառնում է անհավատ: Ալլահը նախազգուշացնում է նրան և մեղադրում ու սպառնում է կրակով՝ երբ ասում է, որ բարձր է դա: **«Կայրեմ ես նրան սկարի վրա» (դուրան, 74:26):** Երբ Ալլահը սպառնում է նրանց՝ ովքեր ասում են**. «մարդկային խոսքից բացի այլ բան չէ դա» (74:25),** մենք ճանաչում և խոստովանում ենք որոշակիությամբ, որ դա մարդկանց արարչի խոսքն է և այն ընդհանրապես նման չէ մարդկային խոսքին:

34. Ալլահին որպես մարդուն ինչ որ կերպ նման էակ նկարագրող ամեն ոք դարնում է անհավատ: բոլոր նրանք՝ ովքեր իմանում են դա զգույշ կլինեն և չեն ասի այնպիսի խոսքեր՝ որ ասում են անհավատները, իմանալով, որ նա իր բոլոր հատկություններով չի նմանվում մարդկանց:

35. Մարդկանց Ալլահի տեսիլքը՝ ճշմարիտ պարտեզի, սակայն նրանց տեսիլքը լիովին չէ և ճանապարհը՝ անհայտ: Ինչպես հաստատվում է մեր աստծո գրքում. **«Այդ օրվա աստծուն ուղղված փայլող դեմքերը» (75:22:23):** Դրա բացատրությունը այնպիսինն է՝ ինչպիսինն գիտի և ցանկանում է Ալլահը: Այս ամենը եկել է մեզ այդ մասին

ուղարկյալից (Ալլահը օրհնի և ողջունի նրան) վավերական հադիսներում, այնպիսինն է՝ ինչպես նա ասաց, և նշանակում է այն՝ ինչ նա ի նկատի ուներ: Մենք չենք խորանում դրա մեջ, աշխատելով բացատրել մեր կարծիքով կամ թույլ տալով մեր պատկերացմանը: Ոչ ոք անվտանգության մեջ չէ իր կրոնում, եթե իրեն ամբողջությամբ չենթարկի մեծն Ալլահին ու նրա փառավոր ուղարկյալին (Ալլահը օրհնի և ողջունի նրան) և դիմի ոչ պարզի բացատրության համար նրան՝ ով ճանաչում է նրան:

36. Իսլամը մարդուն վիճակված չէ, եթե հիմնավորված չի ենթարկման և ենթակայության վրա: Ամեն ոք՝ ով ձգտում է դեպի իր կարողություններից բարձր իմացությանը՝ ընկալման համար, ում բանականությունը բավարարված չի հնազանդությամբ, կհայտնաբերի, որ նրա կիրքը խանգարում է նրան Ալլահի ճշմարիտ միատեսակության մաքուր ընկալմանը մաքուր գիտելիքին և ճիշտ չափմանը, և որ նա տատանվում է հավատքի ու անհավատության մեջ՝ հաստատման և առարկման, ընդունելիի ու անընդունելիի միջև: Նա կենթարկվի խախտման և կհայտնաբերի խարնվածության և կասկածի, ճշմարտությունը չնդունող հավատացյալներին, չնդունողներին, չառարկողներին:

37. Մարդկանց Ալլահի այզու տեսիլքի հավատքը սխալ է, եթե դա բացատրվում է պատկերացման օգնությամբ կամ վերափոխվում է սեփական բանականության համապատասխան հասկացությամբ այնպես՝ ինչպես այդ տեսիլքի բացատրությունը վերաբերվում է մեծ աստվածության ոլորտին (աստծո իշխանության ներքո): Դա մուսուլմանների կրոնն է: Յուրաքանչյուրը՝ ով չի պահպանում իրեն Ալլահի հատկությունների ժխտումից կամ նմանացնում է Ալլահին ինչ որ բանի հետ, ապա նա շեղվել է ճանապարհից և չի կարողացել հասկանալ Ալլահի փառքը, քանի որ մեր աստվածը հնարավորության դեպքում նկարագրվում է միայն բացառականության տերմիններում և բացարձակ միությունում, և ոչ մի արարված ոչ մի կերպով չի նմանվում նրան:

38. Նա ավելի բարձր է այն սահմանափակություններից՝ որ դնում են նրա վրա, դրանից ավելի բարձր, որպեսզի լինեն որոշ չափերում կամ մասեր ու վերջույթներ ունենան: Ի տարբերություն բոլոր արարվածների, նա ընդգրկված չէ լույսի վեց կողմերում:

39. Ալ-Մի ռաջ (վերելք երկնքի մեջով) – Ճշմարտություն: Մարգարեն (Ալլահը օրհնի և ողջունի նրան) բարձրացվել էր գիշերը իր մարմնային ձևով՝ առույգ իրավիճակում (գիտակից

վիճակում) երկինք՝ այնպիսի բարձրություններում, որը ցանկացավ Ալլահը: Ալլահը նրան ասաց պատիվ, ինչպես նաև ցույց տվեց ու նրա համար բացեց այն՝ ինչ բացեց, և «սիրտը «նրան» համաձայն չի նրանում՝ ինչ տեսավ» (ղուրան, 53:11): Ալլահը օրհնեց նրան և խաղաղություն նվիրեց այս և հաջորդ աշխարհներում:

40. Ալ-Հաուդ (լողավազանը՝ որը Ալլահը նվիրում է մարգարեին (Ալլահը օրհնի և ողջունի նրան) ի նշան հարգանքի, որպեսզի հագեցնի նրա Ումմի և դատաստանի օրվա ծարավը) – ճշմարտություն:
41. Աշ-շաֆաա (մուսուլմանների համար նախատեսված բարեխոսություն)-ճշմարտություն՝ ինչպես տրված էր համապաստախանեցված և հեղինակավոր հադիսներում:
42. Դաշնագիր՝ (պայմանագիր) որը կնքեց Ալլահը Ադամի և նրա հետնորդների հետ – ճշմարտություն:
43. Նա ժամանակի ստեղծումից առաջ գիտեր այգի և կրակի մեջ մտնողների ճիշտ քանակը: Այդ քանակները ոչ կշատանան և ոչ էլ կքչանան:
44. Նույնը վերաբերվում է նաև բոլոր մարդկանց արված գործողություններին՝ որ Ալլահը գիտեր: Երջանիկները՝ երջանիկ են, իսկ դժբախտները՝ դժբախտ են Ալլահի կամքով:
45. Կանխորոշումը՝ դա Ալլահի գաղտնիքն է՝ թաքնված իր ստեղծումից և ոչ մի հրեշտակ, ոչ մի

մարգարե չստացավ իմացություններ մարգարեություններում այդ մասին: Խորացումը և չափից շատ մտորումները այդ մասին տանում են միայն անհաջողության ու զրկման և վերջանում են անհնազանդությամբ: Այնպես որ չափազանց զգույշ եղիր այդ մասին մտորումների, մտքերի մեջ և կասկածների հետ՝ որոմք ոչնչացնում են քեզ, քանի որ Ալլահն է հսկում կանխորոշումների (որոշումների) գիտելիֆները մարդկանցից և արգելում է նրանց փնտրել դրանք, ասելով իր գրքի մեջ. **«Նրան չեն հարցնում, թե ինչ է անում, այլ նրանք են հարցվում» (Ղուրան, 21:23):** Այնպեդ որ ով հարցնում է. «Ինչու՞ է Ալլահը անում դա», գնում է որոշման դեմ, և յուրաքանչյուրը՝ ով գնում է որոշման դեմ նա անհավատ է:

46. Դա հակիրճորեն ասվածն է, որ պետք է իմանան Ալլահի այն ընկերները՝ որոնց սրտերը լուսավորված են և այդպես է սահմանվում պինդ գիտելիքներ ունեցողների մակարդակը: Քանի որ գոյություն ունի գիտելիքների երկու մակարդակ՝ այն որ ստեղծված է արարված էակների համար և այն՝ որը անհասանելի է նրանց համար: Անհասանելի գիտելիքների ժխտումը և գիտելիքներ յուրացնելու պահանջը անհավատություն է: Հավատը կարող է պինդ լինել, եթե միայն

յուրացնում ես հասանելի գիտելիքները, իսկ անհասանելի գիտելիքներին չես ձգտում:

47. Մենք հավատում ենք ալ-Լաուհին (կարգավորումներ) և ալ-Քալամին (բմբուլ) և այն ամենին՝ ինչ գրված է: Նույնիսկ եթե բոլոր արարածները հավաքվեն մի տեղ, որպեսզի խանգարեն ինչ որ բանի գոյությանը՝ որը նախատեսել էր Ալլահը կարգավորումում, նրաց դա չի հաջողվի: Եվ եթե բոլոր արարածները հավաքվեին միասին, որպեսզի ստիպեն գոյություն ունենա այն՝ ինչը չի նախատեսել (գոյություն) Ալլահը, նրանց դա չեր հաջողվի: Բմբուլը չորացել է գրելով ամենը, որ գոյություն կունենա մինչ դատաստանի օրը: Ինչը որ գրված չէ մարդուն, չի ունենա և ինչ էլ, որ ունենա երբեք դրանից զրկված չէր լինի (նախատեսվածից):

48. Ստրուկը պետք է իմանա, որ Ալլահը արդեն գիտի այն ամենը՝ որ կլինի իր արարածի հետ և նա կանխորոշել է ամենը՝ բոլոր մանրամասնություններով և նրա որոշումը անփոխելի է: Նրանով ստեղծված ոչինչ չկա երկնքում և երկրում՝ որ կարող է ընդդիմանալ նրան, ավելացնել դրան կամ ջնջել դա, կամ փոխել, կամ թոքրացնել, կամ մեծացնել դա ինչ որ կերպով: Դա հավատքի հիմնարար իմաստն է և գիտելիքի պահանջվող մասը և Ալլահի ու նրա իշխանության բացարվածության խոստովանումը:

Ինչպես ասվում է Ալլահի գրքում. **«Նա արարեց բոլոր իրերը և նախապես կանխորոշեց նրանց եղելիությունը» (ղուրան, 25:2):** Ասում է նաև. **«Ալլահի գործը կանխորոշված գործ էր» (ղուրան, 33:38):** Եվ դարդ կլինի նրան՝ ով թշնամանք ունի Ալլահի որոշմանը և դրանով կխորանա նրա սրտի հիվանդությունը: Սակայն իր պատրանքներով փնտրում է այն՝ ինչը երբեք չի կարող բացատրվել և դարնում է ընդամենը սուտասան մեղավոր:

49. Ալ-Արշ (գահ) և ալ-Քուրսի (բեմ) – ճշմարտություն:
50. Նա գահի և գահի տակ եղածի կարիքը չունի:
51. Նա ունի ամեն ինչ, լինի դա ամենից մեծ, և նրա արարվածը չի կարող ունենալ նրան:
52. Մենք ասում ենք հավատով, խոստովանումով և ենթարկումով, որ Ալլահը մտերիմ ընկեր է արել Իբրահիմին (Աբրահամին) (հալիլ) և որ նա անմիջականորեն խոսել է մուսայի (Մովսեսի) հետ:
53. Մէնք հավատում ենք հրեշտակներին, մարգարեներին և գրքերին՝ որոնք ուղարկված էին ուղարկյալներից և վկայում ենք, որ նրանք բոլորը համապատասխանում են ակնհայտ ճշմարտությանը:
54. Մենք կոչում ենք մեր քաբլի մարդկանց մուսուլմաններ և հավատացյալներ մինչ նրանք

ընդունում են այն՝ ինչ բերել է մարգարեն (Ալլահը օրհնի և ողջունի նրան), և ընդունում են որպես ճշմարտություն այն ամենը՝ ինչ ասվել և վկայվել է նրանց:

55. Մենք չենք մտնում Ալլահի մասին անպերք խոսակցությունների մեջ և թույլ չենք տալիս ոչ մի վեճ կապված Ալլահի կրոնի հետ:

56. Մենք չենք վիճում ղուրանի հետ և վկայում ենք, որ դա բոլոր աշխարհների խոսքն է՝ որով իջել է հավատարիմ հոգին և սովորեցրել է ամենահարգելի ուղարկյալ Մուհամմեդին (Ալլահը օրհնի և ողջունի նրան): Դա Ալլահի խոսքն է և արարվածների ոչ մի խոսք չի համեմատվում դրա հետ: Մենք չենք ասում, որ նա ստեղծված էր և չենք ընդդիմանում մուսուլմանների ջամատի (խմբի) հետ այդ ասպարեզում:

57. Մենք մեր քաբլի մարդկանցից ոչ մեկին անհավատ չենք համարում նրա ինչ որ մեղք գործելու համար, մինչ նա չի համարում դա թույլատրելի:

58. Մենք չենք ասում, որ հավատք ունեցող մարդու մեղքը նրան չի վնասում:

59. Մենք հույսով ենք, որ Ալլահը կների հավատացյալների մեղի բարեգործներին և թույլ կտա նրանց դրախտ (այգի) մտնել լիովին ներված, բայց մենք չենք կարող համոզված լինել դրանում և չենք կարող վկայել, որ դա հաստատ կլինի և նրանք չեն հայտնվի դժողքում: Մենք ներողություն

ենք խնդրում մեղավոր հավատացյալների համար, և ինչքան էլ որ վախում ենք նրանց համար, չենք հուսահատվում:

60. Լիովին համոզվածությունը (վախի բացակայություն) և փրկման մեջ մարդու հուսահատությունը դուրս են բերում կրոնից և ճշմարտության ճանապարհը քիբլի մարդկանց համար ընկած է այդ երկու ծայրահեղությումմերի միջև (օրինակ՝ մարդը պետք է վախենա Ալլահի հաղվարկից և ինքն իրեն դատի, այդպես էլ, ինչպես էլ հույս ունի Ալլահի ողորմությանը):
61. Մարդը հավատքից դուրս չի գալիս եթե չի ժխտում այն՝ ինչը բերել է նրան հավատքին:
62. Հավատքը կազմված է լեզվի պնդումից և սրտի ընդունումից:
63. Եվ այն ամեն ինչը՝ որ հավաստիորեն (դուրս ւ գալիս) մարգարեից (Ալլահը օրհնի և ողջունի նրան) Շարիատի(օրենքի) և պարզեցման (ղուրանի և իսլամի) առումով ճշմարիտ է:
64. Հիմքում հավատքը նույնն է բոլորի մոտ, բայց մեկի և մյուսի գերազանցությունը նրանում՝ Ալլահի վախից և նրա մասին մտորումներից, նրանց ընդդիմանալը իրենց կրքերին և նրանց ընտրությանը ի օգուտ այնինչին՝ ինչից գոհ է Ալլահը:
65. Ալլահի բոլոր հավատացյալ ընկերները և նրանց մեջի Ալլահի դիմաց պատվավորները՝ ովքեր

ավելի հնազանդ են և ամեն ինչից ավելի լավ են հետևում ղուրանին:

66. Հավատքը ներառում է իր մեջ Ալլահին, նրա հրեշտակներին, նրա գիրքը, նրա ուղարկյալներին, վերջին օրը և հավատ նրան՝ որ կանխորոշումը իր բարությամբ ու չարությամբ, Ալլահի քաղցրության ու դառնության հավատը:

67. Մենք հավատում ենք այդ ամենին: Մենք տարբերություն չենք դնում ուղարկյալների մեջ: Բոլոր նրանց ընդունածները ընդունում ենք որպես ճշմարտություն:

68. Մուհամմեդի հետնորդները՝ (Ալլահը օրհնի և ողջունի նրան), որը կատարել են մեծ (ծանր) մեղքեր, այրվելու են կրակում, բայց ոչ հավիտեան այն պայմանում. Եթե մահանան և հանդիպեն Ալլահին որպես նրա միությունը հաստատող հավատացյալներ, նույնիսկ եթե նրանք չեն զղջացել: Նրանք ենթակա են Ալլահի իշխանությանն ու դատին: Եթե նա ցանկանա, ապա ելնելով իր առատաձեռնությունից կխղճա և կների նրանց՝ ինչպես ասված է ղուրանում՝ երբ նա ասում է. **«Ճշմարիտ, Ալլահը չի ներում որպեսզի ընկերներ ձերք բերի, այլ նա ներում է այն՝ ինչը կցանկանա» (4:16):** Եվ եթե նա ցանկանա կրակում կպատժի նրանց, ելնելով իր արդարությունից և հետո կհանի նրանց՝ ովքեր լսում էին նրան կրակից և կուղարկի այգի՝ ելնելով

իր խղճից և բարին կամեցողությունից: Քանի որ Ալլահը հոգեբարձու (պաշտպան) է նրանց համար՝ ովքեր ընդունում են նրան և նա չի վերաբերվի մյուս աշխարհում նրանց այնպես՝ ինչպես վերաբերվում է նրանց՝ ովքեր ժխտում են նրան և զրկված են նրա ղեկավարությունից (կարեկցանք) և չեն ստացել նրա հովանավորությունը: Ով դու Ալլահ՝ իսլամի և մուսուլմանների հովանավոր, ամրապնդիր մեզ իսլամում մինչ այն օրը՝ երբ մենք կհանդիպենք քեզ:

69. Մենք համաձայն ենք, որ կարելի է աղոթել քաբլի յուրաքանչյուր մարդու համար՝ բարեգործների թե մեղավորների, և Թաղման աղոթքը արվում է յուրաքանչյուրի համար՝ երբ նրանք մահանում են:

70. Մենք նրանցից ոչ մեկի մասին չենք ասում, որ նա անպայման կմտնի դրախտ կամ դժոխք և մենք նրանցից ոչ մեկին չենք դատապարտում քուֆրայում (անհավատություն, շիրկում (բազմաստված) և նիֆակում (կեղծավորություն) մինչ նրանք հստակորեն ցույց չեն տալիս դա: Մենք թողնում ենք նրանց արածները Ալլահին:

71. Մենք մերժում ենք Մուհամմեդի (Ալլահը օրհնի և խաղաղություն տա նրան) ումմայից որևէ մեկի սպանությունը, եթե Շարիատը չի ստիպում դա:

72. Մենք ընդունում ենք մե ղեկավարող իմամի դեմ ուղղված ապստամբությունը նույնիսկ եթե նրանք անարդար են և նրանց չարը չենք ցանկանում և

չենք ժխտում նրանց հետևել: Մենք հիմնավորվում ենք նրանից՝ որ նրանց ենթարկվելը դա մեր փառավոր Ալլահին ենթարկվելն էլ է և նշանակում է պարտականություն, մինչ նրանք հրամայում են մեղքեր գործել: Մենք աղոթում ենք նրանց ճիշտ ճանապարհի գտնելու համար և նրանց մեղքերի (սխալ ցործերի) ներման համար:

73. Մենք հետևում ենք մարգարեի (Ալլահը օրհնի և խաղաղություն տա նրան) Սուննային և մուսուլմանների ջամաատին և խուսափում ենք շեղումից, տարաձայնությունից և բաժանումից:
74. Մենք սիրում ենք արդարներին ու հավատարիմներին և ատում անարդարներին ու նենգերին:
75. Երբ մեր գիտելիքը ինչ որ բանի համար անբավարար է ասում ենք. «Ալլահը բոլորից լավ գիտի»:
76. Մենք համաձայն ենք կաշվե գուլպաների (մասիկ վուդայում) մաքրությանը ճամփորդություններում և դրանից դուրս՝ ինչպես մեզ է հասել համոզիչ և հստակ հադիսներում:
77. Մուսուլման ղեկավարների ղեկավարության ներքո հաջն ու ջահադը՝ ճշմարիտ են նրանք, թե մեղավոր՝ պարտականություններ, որ կպահպանվեն մինչ դատաստանի օրը: Ոչինչ ի զորու չէ կանխել կամ առարկել (ժխտել) դրանց:

78. Մենք հավատում ենք Կիրամ Կատաբինին՝ (պատվավոր հրեշտակ-ստեղծագործողներ)որոնք գրում են մեր գործերը, քանի որ Ալլահը նշանակել է նրանց մեր երկուսի միջև պահակներ:
79. Մենք հավատում ենք մահվան հրեշտակին՝ որը պատասխանատու է բոլոր աշխարհների հոգիների տեղափոխման համար:
80. Մենք հավատում ենք պատիժ գերեզմանում նրանց համար՝ ովքեր արժանի են դրան, և հարցաքննմանը գերեզմանում արված մարդու Մունկրով և Նիկարով, նրա կրոնի և մարգարեի մասին՝ ինչպես գրված է Ալլահի ուղարկյալների (Ալլահը գոհ լինի նրանց բոլորից) հաղիսներում:
81. Գերեզմանը կամ այգու մարգագետիններից մեկն է, կամ կրակի անդունդներից մեկը:
82. Մենք հավատում ենք հարության և դատաստանի օրվա մեր մեղքերի հատուցմանը և ալ-Արդին (ցուցադրություն), ալ-Հասիբին (հաղվեհարդար դրանց համար), և կիրառատ ալ-Կատաբին (գրքի կարդացում), և Պարգևատրությանն ու պատժին, և ոս-Սիրոտին (կամուրջ) և Միզանին (կշերք):
83. Դրախտն ու դժողքը ստեղծված բաներ են՝ որոնք երբեք չեն անհետանա, մենք հավատում ենք, որ Ալլահը ստեղծել է մարդկանց, որպեսզի բնակեցնի դրանք: Ում ցանկանում է տանում է այգի՝ ըստ նրա առատաձեռնության, և ում ցանկանում է տանում է կրակը՝ ըստ նրա արդարության:

Բոլորը անում են այն՝ ինչ կանխորոշված է իրենց համար և գնում են դեպի այն՝ ինչ ստեղծված է նրանց համար:

84. Չարն ու բարին կանխորոշված են մարդկանց համար:

85. Թաուֆիկի (աստվածային ողորմություն և օգնութ) Տերմինների կարողությունը՝ որը թույլ է տալիս իրականանալ այս կամ այն գործողությանը չի կարող լինել կենդանու համար: Այդ ունակությունը անխլելի է գործողությունից այն ժամանակ՝ երբ գործողության կարողությանը անհրաժեշտ առողջություն ունենալու առկայության առումից, հնարավորությունից, հարմարվելու և մարդու մեղ անհրաժեշտ միջոցներ ունենալու՝ գործողության ժամանակ: Մեծն Ալլահը ասում է. **«Ալլահը անհնարին ոչինչ հոգուց չի պարտադրում» (Ղուրան, 2:286):**

86. Մարդկանց գործողությունները ստեղծված են Ալլահի կողմից, բայց ձեռք են բերված մարդանց կողմից:

87. Մեծն Ալլահը մարդկանց պարտադրում է միայն այն՝ ինչ նրանք ի վիճակի են անելու և մարդիք կարող են անել միայն այն՝ ինչ Ալլահն է պարտադրել: Դա հետևյալ ասվածի բացատրությունն է. «Ալլահի ունեցած իշխանությունից այլ ուժ գոյություն չունի»: Մենք կավելացնենք, որ չկա խորամանկություն և

տարբերակ՝ որի օգնությամբ կարելի է խուսափել Ալլահին ենթարկվելուն և դուրս գալ դրանից, եթե միայն դա չլինի Ալլահի օգնությամբ, և ոչ ոք չի կարող ենթարկվել Ալլահին գործում և մնա հստակորեն ենթարկման մեջ, եթե Ալլահը թույլ չտա նրան:

88. Ամեն ինչ լույս է տեսնում Ալլահի կամքով, գիտելիքով, կանխորոշմամբ և որոշմամբ: Նրա կամքը բարձր է բոլոր մնացած կամքերից (ցանկություններից), և նրա որոշումը գերազանցում է բոլոր խորամանկություններին: Նա անում է այն ամենը՝ ինչ ցանկանում է և երբեք անարդար չի լինում: Նա յուր մաքրությունում բարձր է բոլոր չարիքներից ու անեծքներից, և նա կատարյալ է: **«Նրան չեն հարցնում, թե ինչ է անում, այլ նրանց կհարցնեն» (ղուրան, 21:23):**

89. Մահացած մարդկանց համար ողջերի ներումն (աղոթք) ու խիղճը օգտակար է:

90. Ալլահը պատասխանում է աղոթք-դիմումներին և տալիս է այն ամենը՝ ինչ նրան խնդրվում է:

91. Ալլահը լիովին վերահսկում է ամեն ինչը, և ոչինչ չի վերահսկում նրան: Ոչինչ չի կարող լինել նրանից անկախ, նույնիսկ աչքի ակնթարթը, և ով՝ համարում է իրեն Ալլահից անկախ, նույնիսկ աչքի ակնթարթում, ապա նա մեղավոր է անհավատության մեջ և դառնում է նզովքի մարդկանցից մեկը:

92. Ալլահը չի զայրանում կամ գոհանում արարվածներից ոչ մեկի նման:
93. Մենք սիրում ենք Ալլահի ուղարկյալի (Ալլահը օրհնի և ողջունի նրան) ուղեկիցներին, բայց չենք ցույց տալիս սիրային ծայրահեղություններ, առանձնացնելով նրանցից ինչ որ մեկին և չենք ժխտում նրանցից ոչ մեկին: Մենք ատում ենք նրանց՝ ովքեր ատում են նրանց և չարախոսում նրանց մասին: Մենք միայն բարին ենք ասում ուղեկիցների մասին: Սերը նրանց հանդեպ կազմում է իսլամի մի մասը, ինչպես նաև հավատքի և ճիշտ վարմունքի (իհսան), այնքամ՝ երբ նրանց հանդեպ ատելությունը անհավատություն, կեղծավորություն և դաժանություն է:
94. Մենք խուսափում ենք կարծիքից՝ որ Ալլահի ուղարկյալի (Ալլահը օրհնի և ողջունի նրան) մահվանից հետո խալիֆատը սկզբից պատկանում էր Աբու Բակրա աս-Սիդդիկին (Ալլահը գոհ լինի նրանից), ապացուցում է նրա գերազանցությունն ու ավագությունը մյուս մուսուլմանների հանդեպ: Այնուհետև Ումար իբն ալ-Քադդաբիին (Ալլահը գոհ լինի նրանից), Այնուհետև Ուսմանուինը (Ալլահը գոհ լինի նրանից), այնուհետև Ալի իբն Աբու Թալիբինը (Ալլահը գոհ լինի նրանից): Նրանք ճշմարիտ խալիֆներ և արդար մուսուլմաններ էին:

95. Մենք վկայում ենք, որ այն տասնյակը՝ որ կոչվում են Ալլահի ուղարկյալներ (Ալլահը օրհնի և ողջունի նրանց) և որոնց ուրախացրեց այգիով, նրանք կլինեն այգում, ինչպես և Ալլահի ուղարկյալը՝ (Ալլահը օրհնի և ողջունի նրան), ում խոսքերը ճշմարիտ են և վկայում են, որ նրանք այդտեղ կլինեն: Այդ տասնյակը՝ Աբու Բակր, Ումար, Ուսման, Ալի, Թալհա, Զաիբիր, Սադ, Սաիդ, Աբդուռահման իբն Աուֆ և Աբու Ուբայդա իբն ալ-Զառռահ՝ որի կոչումը այդ ումմայի (Ալլահը գոհ լինի նրանց բոլորից) հոգեբարձն էր:

96. Ամեն ոք՝ ով ասում է բարին Ալլահի ուղարկյալի (Ալլահը օրհնի և ողջունի նրան) ուղեկիցների և նրա կանակց ու հետնորդների մասին, նրանք բոլորը մաքուր և անպիղծ են՝ ոչ մի կեղտոտությամբ (կեղտով), ազատ է կեղծավորության մեղադրանքից:

97. Առաջին համայնքի գիտնականները և նրանք՝ ովքեր ստեղծում էին նրանց ճանապարհները՝ բարեգործ մարդիք, հադիսներ տեղեկացնողները, իրավագետներն ու բանականության իմաստունները՝ նրանց մասին պետք է խոսել միայն լավագույն խոսքերով և ով՝ չարախոսի նրանց մասին, ապա նա չի գտնվում ճիշտ ճանապարհին:

98. Մենք նախնտրություն չենք տալիս ոչ մեկին ումմայի մարդկանց աուլիայից՝ (սրբեր,

ճշմարիտներր և Ալլահին մտերիմ ստրուկներր), մարգարեների մեջ, բայց ասում ենք, որ մարգարեներից յուրաքանչյուրը ավելի լավն է քան աուլիայի բոլոր մարդիք իրար հետ:

99. Մենք հավատում ենք այնինչներին՝ որ գիտենք քարամատի մասին՝ աուլիայի հրաշքներին, նրանց մասին հավաստի աղբյուրներից ճշմարիտ պատմությունների մասին:

100. Մենք հավատում ենք ժամի նշաններին՝ ինչպիսինն է Դաջալի (հակա-քրիստոսի) հայտվելը և Հիսուսի Մարիամի որդու(խաղաղություն նրան) գալիքը երկնքից, արևմուտքին այն տեղից՝ որտեղ իջնում է արևը, և գազանի ու երկրի հայտնվելուն:

101. Մենք որպես ճշմարտություն չենք ընդունում այն՝ ինչ ասում են գուշակները, չենք ընդունում նրանց հայտարարությունները՝ ովքեր խոսում են սուրբ գրքի, սուննայի ա. Մուսուլմանական ումմայի համաձայնության դեմ:

102. Մենք համաձայն ենք, որ միասին լինելը դա ճշմարիտ և ճիշտ ճանապարհ է, իսկ առանձնացումը՝ շեղում ու պատիժ:

103. Երկրում և երկնքում կա Ալլահի միայն մի կրոն և այդ կրոնը իսլամն է: Ալլահն ասում է.
«Ճշմարիտ, կրոնը Ալլահի դիմաց միայն իսլամն է» (ղուրան, 3:19):
Ասում է նաև. **«Եվ բավարարվեց ձեր համար որպես կրոն իսլամով» (ղուրան, 5:3):**

104. Իսլամը գտնվում է գերազանցության և անբավարարության միջև, թաշբիխի (Ալլահի հատկությունների փոխարինումը այլ բանով) և տատիլեմի (Ալլահի հատկությունների ժխտում) միջև, ստիպողականության և կանխորոշման ժխտման միջև՝ որը գալիս է Ալլահից, և համոզվածության (Ալլահի խղճի) միջև:

105. Դա մեր կրոնն է, դա այն է՝ ինչին հավատում ենք ներքուստ և արտաքուստ, և մենք ժխտում ենք ամեն կապ Ալլահի և յուրաքանչյուրի՝ ով գնում է մեր աստծո ու պարզեցումների դեմ:

Մենք խնդրում ենք Ալլահին, որ մեզ ամրապնդի մեր հավատքում և գրի մեր կյանքերը նրան, և պաշտպանել մեզ տարբեր մտքերից ու ցվրված կարծիքներից ու սխալ դպրոցներից՝ ինչպիսիք են մուշաբբինը, մուտազիլը, ջախմայը, ջաբրին, քադարին և այլ նմաններից՝ որոնք գնացին Սուննայի և Ջամաատի դեմ ու մեր կարծիհով նրանք մոլորված են և մահվան ճանապարհին:

Մենք խնդրում ենք Ալլահից, որ պաշտպանի մեզ ամբողջ ստից, և խնդրում ենք նրա ողորմությունն ու աջաքցությունը բարին կարարելու մեջ: Սրանով եզրափակվում է իմամ գիրքը:

Իմամ Աբու Ջաֆառատ-Թահավի